


Օգտագործողի ձեռնարկ
Էլեկտրական տրանսպորտային միջոցի
լիցքավորման սարքավորում IC-CPD
(Ներ-մալուխային կառավարման և պաշտպանության սարք)



Բովանդակություն

Էլեկտրական տրանսպորտային միջոցի լիցքավորման սարքավորում IC-CPD

1. Ընդհանուր տեղեկություններ	2
2. IC-CPD լիցքավորման սարքավորման ամփոփագիր	3
3. Օգտագործված զգուշացման նշաններ, նշաններ և պատկերագրեր	4
4. Անվտանգության ցուցումներ	6
5. Հիմնական առանձնահատկությունները... ..	9
6. Օգտագործողի առավելությունները և առանձնահատկությունները	10
7. Ավտոմեքենայի հասանելի լիցքավորման մուտքեր և միակցիչներ	11
8. Հասանելի էլեկտրական մալուխներ արդյունաբերական վարդակների համար	12
9. Հասանելի էլեկտրական մալուխներ կենցաղային վարդակների համար	12
10. ICCB կառավարման տուփի առջևի ցուցադրիչ	14
11. Գործարկումը	15
12. Խափանումների շտկում	15
13. Անսարքությունների կարգավորում	15
14. ICCB կառավարման տուփի հետնամասի պիտակ	17
15. Տեխնիկական սպասարկում և ինամը... ..	18


16. Արտադրանքի փոփոխություններ	18
17. Օգտահանում.....	19
18. Երաշխիքի մասին տեղեկություններ.....	19
19. Տեխնիկական բնութագրեր	20
20. Սպասարկումը	21
21. Միջանկյալ ներդիր (ընտրովի).....	21

Հապավումներ

ՄԷ (BEV)	Մարտկոցով էլեկտրոմոբիլ
ԴԳԴՅ (PRCD-S) ...	Դյուրակիր փոխանջատվող ռիֆերենցիալ հոսանքով սարք
ԷՍՍ (EVSE)	Էլեկտրոմոբիլի սնուցման սարքավորում
ԿՀՖՀ (FCC)	Կապի և հաղորդակցման ֆերերալ հանձնաժողով
ՆՄԿՏ (ICCB)	Ներ-մալուխային կառավարման տուփ
ՆՄԿՊՍ (IC-CPD).....	Ներ-մալուխային կառավարման և պաշտպանության սարք
ԼԴ (LED).....	Լուսարձակող դիոդ (ցուցիչի լույս)
ԽՄՅԷ (PHEV)	Խրոցակով միացվող հիբրիդային էլեկտրոմոբիլ

1. Ընդհանուր տեղեկություններ

Այս Օգտագործողի ձեռնարկը հիմնված է հրատարակության պահին առկա արտադրանքի վերջին տեղեկությունների վրա: APTIV-ն իրավունք է վերապահում փոփոխել արտադրանքը առանց նախնական ծանուցման: Արտադրանքի մեջ կատարված ցանկացած փոփոխություն կամ ձևափոխում կարող է հանգեցնել երաշխիքի կորստի, եթե այդ փոփոխությունները չեն իրականացվել հաստատված սպասարկման կենտրոնի կողմից:

Եթե արտադրանքի օգտագործման հետ կապված հարցեր ունեք, դիմեք ձեր սպասարկման ներկայացուցչին: Ձեր տարածաշրջանի համար պատասխանատու հաճախորդների սպասարկման կազմակերպության տվյալների համար անդրադարձեք ձեր ավտոմեքենայի ձեռնարկին: 

Տեղեկություններ ընկերության մասին

Aptiv Services Deutschland GmbH
Am Technologiepark 1
D-42119 Wuppertal
GERMANY

Վեբկայքի հասցե. www.aptiv.com


2. IC-CPD սարքավորման ամփոփագիր

Համակարգի առանձին բաղադրիչների սահմանումների համար անդրադարձեք ստորև ներկայացված ամփոփագրին:

- Ա** Ավտոմեքենայի լիցքավորման մուտք
- Բ** Ավտոմեքենայի միակցիչ (→ Էջ 11)
- Գ** Կառավարման տուփ (ICCB)
- Դ** Փոփոխական հոսանքի (ՓՀ) մալուխ
- Ե** Էլեկտրական խրոցակ
- Զ** Էլեկտրացանցի վարդակ
- Է** Լուսադիրողային առջևի ցուցադրիչ (→ Էջ 14)
- Ը** Հետևամասի պիտակ (→ Էջ 17)

ՆՄԿՊՍ (IC-CPD)

(Ներ-մալուխային կառավարման և պաշտպանության սարք)



3. Օգտագործված զգուշացման նշաններ, նշաններ և պատկերազերեր

Զգուշացման նշաններ

ԿՏԱՆԳ

Ցույց է տալիս սպառնացող վտանգը: Այս ցուցումին չհետևելու դեպքում կլինեն **մահվան** կամ **լուրջ վնասվածքների** դեպքեր:

ԶԳՈՒՇԱՑՈՒՄ

Ցույց է տալիս հավանական վտանգը: Այս ցուցումին չհետևելու դեպքում կարող են լինել **մահվան** կամ **լուրջ վնասվածքների** դեպքեր:




ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ցույց է տալիս վտանգավոր իրավիճակ: Այս ցուցումին չհետևելու դեպքում կարող են լինել **թեթև** կամ **փոքր վնասվածքներ**:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ուշադրություն է հրավիրում այնպիսի իրավիճակի վրա, ինչից չխուսափելու դեպքում կարող է հանգեցնել նյութական վնասի:

Նշաններ

-  Օգտագործողի ձեռնարկի այլ բաժիններին տրված հղում
-  Այլ փաստաթղթերին կամ ցուցումներին տրված հղում
-  Գործարկման ցուցումներ

3. Օգտագործված զգուշացման նշանները, նշանները և պատկերագրերը

Պատկերագրեր



Ցուցում.
Չետևեք ցուցումներին



Չգուշացում.
Էլեկտրական լարում



Չգուշացում.
Մակերևույթը տաք է



Չգուշացում.
Խոչընդոտներ կան գետնին



Չգույշ վարվեք
Ցուցում. Չգույշ վարվեք լիցքավորման սարքի հետ



Արգելվում է.
Մի քանի վարդակներ և հարմարիչներ չեն թույլատրվում



Արգելվում է.
Երկարացման լարեր չեն թույլատրվում



Արգելվում է.
Մի խճճեք մալուխը



Արգելվում է.
Մի պահեք անմիջապես արևի տակ մի ծածկեք անմիջական ծածկով



Արգելվում է. Մի ընկղմեք ջրի մեջ, ջրի շիթը մի պահեք կամ ջուր մի շաղ տվեք անմիջապես վրան



Արգելվում է.
Չիպել ձյանը կամ սառույցին



Արգելվում է.
Մի օգտագործեք լիցքավորման սարքավորումը փաթաթված մալուխներով



Արգելվում է.
Մի անցեք խրոցակի, կառավարման տուևի և մալուխների վրայով



Արգելվում է.
Մի օգտագործեք IC-CPD սարքավորումը, եթե այն վնասված է



Արգելվում է. Մի կատարեք վերանորոգման աշխատանքներ IC-CPD սարքավորման վրա և մի բացեք այն



Արգելվում է.
Լիցքավորման ընթացքում մի հանեք խրոցակը



Գործարկման համար նախատեսված ջերմաստիճանի ընդգրկույթը

4. Անվտանգության ցուցումներ

⚠ ԿՏԱՆԳ

Էլեկտրահարման կամ հրդեհի վտանգ



Սխալ տեղադրված վարդակները կարող են հանգեցնել էլեկտրահարման կամ հրդեհի՝ բարձր լարման մարտկոցը մեքենայի լիցքավորման մուտքի միջոցով լիցքավորելիս:

- IC-CPD լիցքավորման սարքավորումները գործարկեք միայն պատշաճ հողանցումով էլեկտրական ցանցերում
- Լիցքավորման համար օգտագործվող էլեկտրացանցի վարդակը պետք է միացված լինի տեղական օրենքներին և չափանիշներին համապատասխանող պաշտպանված ցանցի
- Վարդակը պետք է պաշտպանված լինի գործող դիֆերենցիալ հոսանքի սխեմայով աշխատող ավտոմատ անջատիչով (ԴՅԱԱ/RCCB)
- Հետևեք տեղադրման ձեռնարկում և ավտոմեքենայի ձեռնարկում նշված անվտանգության ցուցումներին

⚠ ԿՏԱՆԳ

Էլեկտրահարում, կարճ միացում, հրդեհ, պայթյուն



Վնասված կամ անսարք լիցքավորման մալուխի կամ վնասված կամ անսարք վարդակի օգտագործումը, IC-CPD լիցքավորման սարքավորումներին ոչ պատշաճ օգտագործումը կամ նախազգուշակյան միջոցների չհետևելը կարող են հանգեցնել կարճ միացումների, էլեկտրահարման դեպքերի, պայթյունների, հրդեհի և այրվածքների:

- Մի օգտագործեք IC-CPD լիցքավորման սարքը, եթե այն վնասված է և/կամ աղտոտված: Նախքան օգտագործելը ստուգեք վնասվածքների և աղտոտվածության առկայությունը մալուխի և միակցիչի վրա



- Մի օգտագործեք մաշված կամ վնասված վարդակ: Խրոցակը պետք է ամուր տեղակայված լինի վարդակի մեջ՝ տեղական նորմերին ու օրենքներին համապատասխան

IC-CPD լիցքավորման սարքավորումը մաշված կամ վնասված վարդակին միացնելու դեպքում կարող է հանգեցնել լուրջ վնասվածքների կամ հրդեհի:

- Մի հանեք կափարիչը և մի բացեք կորպուսը: Սարքի մեջ չկան այնպիսի մասեր, որոնք հնարավոր լինի սպասարկել օգտագործողի կողմից: Սպասարկման աշխատանքները թողեք համապատասխան որակավորում ունեցող անձնակազմին (տես սպասարկման մասին տեղեկությունները՝ ➔ Էջ 21)
- Ձեռք մի տվեք ավտոմեքենայի միակցիչի ներսի մասում գտնվող մասերին
- Մի կիրառեք գերլարում IC-CPD լիցքավորման սարքավորման հանդեպ: Սարքի համար նախատեսված վարդակի լարումն իմանալու համար անորոշարժեք հետևամասի պիտակի վրա նշված տեխնիկական բնութագրերին
- Մի օգտագործեք երկարացման լարեր, մալուխի կոճեր, մի քանի վարդակներ, (ճամփորդական) հարմարիչներ, ժամաչափեր և այլն:



4. Անվտանգության ցուցումներ

- Մի կատարեք փոփոխություններ կամ վերանորոգման աշխատանքներ էլեկտրական մասերի հետ և մի բացեք սարքը



- Մի դիպչեք ավտոմեքենայի լիցքավորման մուտքի և IC-CPD լիցքավորման սարքավորման հպակներին
- Չե՛րձ պահեք վարդակները, խրոցակի միակցումը և IC-CPD լիցքավորման սարքավորումը խոնավությունից, ջրից, ձյունից, սառույցից և այլ հեղուկներից: Երբեք մի ընկղմեք ջրի մեջ



- Անպրոպի ժամանակ անջատեք IC-CPD լիցքավորման սարքը վարդակից
- Մի մոցրեք այլ առարկաներ ավտոմեքենայի լիցքավորման մուտքի կամ IC-CPD լիցքավորման սարքավորման մեջ

- Մաքրեք IC-CPD լիցքավորման սարքավորումը միայն այն դեպքում, եթե կառավարման սարքն ամբողջովին անջատված է էլեկտրական ցանցից և ավտոմեքենայից: Մաքրելու համար օգտագործեք չոր լաթի կտոր
- IC-CPD լիցքավորման սարքավորումները չպետք է գործարկվեն թմրամիջոցների, ալկոհոլի կամ դեղամիջոցների ազդեցության տակ գտնվող անձանց կողմից
- IC-CPD լիցքավորման սարքավորումները չպետք է գործարկվեն այն անձանց կողմից, ովքեր ծանոթ չեն օգտագործմանը կամ, ովքեր չեն կարդացել Օգտագործողի ձեռնարկը
- Հեռու պահեք IC-CPD լիցքավորման սարքավորումները հաշմանդամներից և երեխաներից, ովքեր չեն կարող զնահատել դրանց հետ վարվելու հետ կապված վտանգները
- Անուշադրության մատնված լիցքավորման գործընթացն իրականացնելիս կողմնակի անձինք (օրինակ՝ խաղացող երեխաները) չպետք է մուտքի իրավունք ունենան IC-CPD լիցքավորման սարքավորմանը

⚠ ԶԳՈՒՇԱՑՈՒՄ

Պայթյունի կամ հրդեհի վտանգ

Իմանալու համար՝ արդյոք ավտոմեքենան լիցքավորման մուտք ունի, անդրադարձե՛ք մեքենայի ձեռնարկին:

IC-CPD լիցքավորման սարքավորումների բաղադրիչները կարող են առաջացնել կայծեր և բոցավառել դյուրավառ կամ պայթուցիկ գույրջինները:

- Լիցքավորելու ընթացքում համոզվեք, որ կառավարման տուևիը գտնվում է գետնից առնվազն 20 դյույմ (50 սմ) բարձրության վրա՝ պայթյունների ռիսկը նվազեցնելու համար, հատկապես ավտոտնակներում:
- Մի օգտագործեք լիցքավորման և կառավարման սարքը հնարավոր պայթյունավտանգ միջավայրում
- Այս սարքը նախատեսված է միայն այն մեքենաների համար, որոնց լիցքավորման ընթացքում օդափոխություն չի պահանջվում

4. Անվտանգության ցուցումներ

ՃԱՆՈՑԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Լիցքավորման և կառավարման սարքը կարող է վնասվել

- Մի սահեցրեք IC-CPD լիցքավորման սարքավորումը սուր եզրեր ունեցող առարկաների վրայով
- Մի խճճեք լիցքավորման մալուխը



- Մի անցեք խրոցակի, կառավարման տուփի կամ մալուխների վրայով



- Մի կիրառեք արտասովոր մեխանիկական ուժ IC-CPD սարքավորման վրա



Չգույշ վարվեք

- Մի գործարկեք IC-CPD լիցքավորման սարքավորումը շրջակա ջերմաստիճանի թույլատրելի սահմաններից դուրս՝ -22 °F-ից (-30 °C) մինչև 122 °F (+50 °C): Ավելի ցածր կամ բարձր ջերմաստիճանի դեպքում սարքը կարող է վնասվել



- Մի փորձեք միացնել չհամապատասխանող ավտոմեքենայի միակցիչներ և լիցքավորման մուտքեր
- Մի օգտագործեք IC-CPD լիցքավորման սարքավորումը խճճված մալուխներով



Նախատեսված կիրառումը

- Լիցքավորման մալուխը միացրեք անմիջականորեն միայն էլեկտրացանցի վարդակից
- Չի թույլատրվում օգտագործել այլ արտադրողների կողմից տրամադրված լիցքավորման մալուխ
- Ոչ ճիշտ օգտագործումը կարող է հանգեցնել անսարքությունների և վնասել գույքը: APTIV-ի կողմից տրամադրված ներկառուցված ներ-


մալուխային կառավարման և պաշտպանության սարքով (IC-CPD) լիցքավորման սարքավորումը էլեկտրոմոբիլների համար նախատեսված շարժական լիցքավորման սարք է (EVSE), որն ունի հոսանքի միացման հնարավորություն մարտկոցով աշխատող էլեկտրոմոբիլների (BEV) և խրոցակով միացվող հիբրիդային էլեկտրոմոբիլների (PHEV) լիցքավորման համար

Անվտանգ, օգտագործողի համար հարմար շարժական IC-CPD (ռեժիմ 2) սարքավորումը թույլ է տալիս էլեկտրոմոբիլների տերերին միացնել և լիցքավորել իրենց ավտոմեքենաները գրեթե ամենուր՝ 100 ւ - 240 ւ ՓՅ էլեկտրասնուցման ցանցերին՝ կախված տարածաշրջանի հոսանքի ցանցից և սարքի տարբերակից:


Այս համակարգը բաղկացած է երեք առանձին բաղադրիչներից, որոնք միասին առաջարկում են էլեկտրոմոբիլը լիցքավորելու ամուր և հուսալի մեթոդ:

1. ՓՅ մալուխ (խրոցակի տեսակը՝ ըստ շրջանի) (➔ Էջ 3 և 12)
2. ICCB կառավարման տուփ (➔ Էջ 3 և 13)
3. Ավտոմեքենայի միացման տեսակ (ըստ շրջանի) (➔ Էջ 3 և 11)


5. Հիմնական առանձնահատկությունները


- Օգտագործողի, Էլեկտրոմոբիլի և IC-CPD լիցքավորման սարքավորման համար նախատեսված անվտանգության մակարդակներ
- Հողանցման վերահսկման համակարգ (կախված մոդելից)
 - Ձեր տարբերակն ունի հողանցման վերահսկման համակարգ, եթե հետևամասի պիտակի վրա ցուցադրվում է հետևյալ նշանը
- 
 - Հողանցման վերահսկման համակարգով տարբերակները չեն աշխատում այն Էլեկտրացանցերում, որտեղ չկա պաշտպանիչ հաղորդագունդ
- Չորս լուսադիոդ (առջևի ցուցադրիչի մանրամասն նկարագրություն, ➔ էջ 14)
- Լիցքավորման ավտոմատ անջատիչ (PRCD-S) ցանցի ավտոմատ միակցումով
- Կոճակի սեղմումով կառավարվող կողպեք՝ IC-CPD լիցքավորման սարքավորման և ավտոմեքենայի միակցիչի (միայն տեսակ 1-ի և GB/T ստանդարտի համար, ➔ էջ 11) միջև անվտանգ միացում հաստատելու համար
- IC-CPD լիցքավորման սարքավորումը նախատեսված է ինչպես ներսում, այնպես էլ դրսում օգտագործելու համար: Լրացուցիչ տեղեկությունների համար անդրադարձեք հետևամասի պիտակին (➔ էջ 17)


6. Օգտագործողի առավելությունները և առանձնահատկությունները

Այս IC-CPD լիցքավորման սարքավորումը թույլ է տալիս լիցքավորել ձեր մարտկոցով աշխատող էլեկտրոմոբիլը (BEV) կամ խրոցակով միացվող հիբրիդային էլեկտրոմոբիլը (PHEV) առանց որևէ լրացուցիչ սարքի: Օգտագործման համար հարմարավետ խրոցակային համակարգի շնորհիվ ավտոմեքենայի միակցիչը ուղղակիորեն տեղավորվում է մեքենայի և առկա էլեկտրական ենթակառուցվածքի լիցքավորման մուտքի մեջ: IC-CPD լիցքավորման սարքավորումը ապահովում է ստանդարտ հողանցումով հոսանք բնակելի շենքի վարդակներում՝ 100 Վ-ից մինչև 240 Վ 50/60 Հց (կախված մոդելի տարբերակից) և 6 Ա-ից մինչև 16 Ա լիցքավորման հոսանք՝ համաձայն ձեր սարքի կառավարման տուփի հետևանափ պիտակի տվյալների: 

Ավտոմեքենայի մալուխ:

- IEC 62196-1 խրոցակներ, շտեպսելային վարդակներ, ավտոմեքենայի միակցիչներ և ավտոմեքենայի մուտքեր – էլեկտրոմոբիլների հաղորդիչ լիցքավորում – Մաս 1. Ընդհանուր պահանջներ
- IEC 62196-2 խրոցակներ, շտեպսելային վարդակներ, ավտոմեքենայի միակցիչներ և ավտոմեքենայի մուտքեր – էլեկտրոմոբիլների հաղորդիչ լիցքավորում – Մաս 2. Չափերի համատեղելիության և փոխանակելիության պահանջները a.c. բույթային և հպակային փողերի լրասարքերի համար
- Միկրոփոխանջատիչի վրա հիմնված անկոնտակտ անջատիչ (միայն տեսակ 1 և GB/T ստանդարտի ավտոմեքենաների միակցիչների համար,  էջ 11)

- Գլանաքերթումով բռնակ հեշտ սահեցնելու համար կողպման կառավարում (միայն տեսակ 1 և GB/T ստանդարտի ավտոմեքենաների միակցիչի համար,  էջ 11)
- Էրզոնմիկ ռետինե բռնակ, որն ապահովում է օպտիմալ աջակցում
- Մեքենայի լիցքավորման մուտքը և էլեկտրացանցի վարդակը ճիշտ միացնելու դեպքում բոլոր տերմինալային ինտերֆեյսները և տերմինալները ամբողջովին պաշտպանված են կոնտակտից
- Ջերմաստիճանի վերահսկումը
- IC-CPD սարքավորումը մշտապես վերահսկում է էլեկտրական խրոցակի ներսում գտնվող ջերմաստիճանը, որպեսզի էլեկտրական խրոցակի գերտաքացումը որոշակի հանգամանքներում կանխարգելվի



7. Ավտոմեքենայի հասանելի լիցքավորման մուտքեր և միակցիչներ

Կախված որոշակի երկրի համար նախատեսված կոնկրետ սարքավորումից՝ տրամադրվում են տարբեր լիցքավորման մուտքեր և ավտոմեքենայի միակցիչներ:




Օգտագործեք միայն ձեր երկրի համար նախատեսված լիցքավորման սարքավորումները:

Ավտոմեքենայի
լիցքավորման
մուտք

Ավտոմեքենայի
միակցիչ



Տեսակ

Լիցքավորման
հասանելի մուտքեր




IEC 62196-2
Տեսակ 2

- Երկու 3 մմ-անոց հպակային պարկուճ՝ վերահսկման կոնտակտի համար
- Երկու 6 մմ-անոց հպակային պարկուճ՝ գծի համար
- Մեկ 6 մմ-անոց հպակային պարկուճ՝ հողանցման կոնտակտի համար



IEC 62196-2/SAE-J1772-2009
Տեսակ 1

- Երկու 1,5 մմ-անոց հպակային պարկուճ՝ վերահսկման կոնտակտի համար
- Երկու 3,6 մմ-անոց հպակային պարկուճ՝ գծի համար
- Մեկ 2,8 մմ-անոց հպակային պարկուճ՝ հողանցման կոնտակտի համար



GB/T 20234.2
Տեսակ GB/T

- Երկու 3 մմ-անոց հպակային բույթ՝ վերահսկման կոնտակտի համար
- Երկու 6 մմ-անոց հպակային բույթ՝ գծի համար
- Մեկ 6 մմ-անոց հպակային պարկուճ՝ հողանցման կոնտակտի համար

8. Հասանելի էլեկտրական մալուխներ արդյունաբերական վարդակների համար

Լիցքավորման օպտիմալ արագությամբ լիցքավորելու համար օգտագործեք միայն հետևյալ խրոցակները: Լիցքավորման առավելագույն հզորությունը մինչև 3,6 կՎտ Է (կախված էլեկտրական ցանցից/տան միացումից և ներկառուցված լիցքավորիչից):

- ➔ Անդրադարձեք «Տեխնիկական բնութագրեր» էջին:
- ☑ Հետևեք ավտոմեքենայի ձեռնարկում նշված ցուցումներին:

Վարդակ	Միակցիչ	Տեսակ
		IEC 60309-2 CEE 16/3 Կայանման տեսակը
		JIS C 8303 (JWDS-0033)

9. Էլեկտրական կենցաղային վարդակների հոսանքի մալուխները հասանելի են տարբեր երկրների տարբերակներով

Վարդակ	Միակցիչ	Տեսակ
		NEMA-5-15 Տեսակ B
		CEE 7/7 Տեսակ E/Տեսակ F «Schuko»
		BS 1363 Տեսակ G
		AS 3112 Տեսակ I
		GB 2099.1 Տեսակ I
		SEV 1011 Տեսակ J


Վարդակ	Միակցիչ	Տեսակ
		AFS-NIT 107-2 D1 Տեսակ K
		CEI 23-50 Տեսակ L
		SANS 164-1 Տեսակ M
		NBR 14136 Տեսակ N
		TIS 166-2549 Տեսակ O
		IRAM 2073 Տեսակ I
		CNS 690 Տեսակ B

ՆՄԿՏ.

- IEC 61851-1 էլեկտրամոբիլների հաղորդիչ լիցքավորման համակարգ – Մաս 1. Ընդհանուր պահանջներ
- Հողանցման վերահսկում
- Կախված սարքավորումից՝ ICCB սարքավորումը չափում է պաշտպանիչ հաղորդիչի դիմադրությունը և դադարեցնում է լիցքավորման գործընթացը, եթե չափված արժեքը չափազանց բարձր է





- Լիցքավորման ավտոմատ անջատիչ PRCD-S (Էլեկտրահարումից պաշտպանող սարք)
- Հայտնաբերում է կարճ միացումները և անջատում լիցքավորման գործընթացը
- Ինքնաստուգում, որը գերծ է պահում ամսական կտրվածքով ստուգման անհրաժեշտությունից՝ մնուցումը միացնելուց հետո և յուրաքանչյուր լիցքավորման ցիկլից առաջ

- Լիցքավորման ավտոմատ անջատիչ ՄԻԱՑՐՎԾ/ԱՆՋԱՏՎԱԾ
- Թույլ է տալիս վերսկսել լիցքավորման գործընթացը որոշակի սխալներից և 5 րոպե սպասման ժամանակահատվածից հետո
- Եթե սխալը ուղղվել է, ապա օգտագործողի կողմից միջամտություն չի պահանջվում
- Ջերմաստիճանի վերահսկումը
- ICCB-ը մշտապես վերահսկում է տուփի ներսում եղած ջերմաստիճանը և դրանով իսկ կանխում գերտաքացումը որոշակի պայմաններում



10. ICCB-ի առջևի ցուցադրիչ

IC-CPD-ի առջևի վահանակի վրա չորս ցուցիչ լույս կա.

1.  **ՀՈՍԱՆՔ** լույսը վառվում է. Էլեկտրացանցից ստացվող հոսանքը միացրած է, և IC-CPD-ն պատրաստ է օգտագործման համար
2.  **ԼԻՑՔԱՎՈՐՈՒՄ** լույսը թարթում է. Թարթող լույսը ցույց է տալիս, որ ավտոմեքենային էլեկտրաէներգիա է գնում
3.  **ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆ** լույսը վառվում է. Ներքին ջերմաստիճանը գերազանցում է որոշակի արժեքը
4.  **ԽԱՓԱՆՈՒՄ** լույսը թարթում է կարմիր գույնով. Ցույց է տալիս անսարքություն լիցքավորման համակարգում

Ըստ գործարկման ռեժիմի՝ IC-CPD լիցքավորման սարքավորումը ցույց է տալիս մշտապես լուսավորվող և/կամ թարթող լուսադիոդների տարբեր համակցություններ:

(Լրացուցիչ պարզաբանումների համար տես ➔ էջ 17)



11. Գործարկումը


IC-CPD լիցքավորման սարքավորման գործարկման համար հետևեք հետևյալ ցուցումներին.

1. Ամբողջությամբ կարդացեք և ըմբռնեք ավտոմեքենայի ձեռնարկը և IC-CPD լիցքավորման սարքավորման ցուցումները




- ▶ Ամբողջությամբ քանդեք IC-CPD լիցքավորման սարքավորման մալուխը



2.  Զամոզվեք, որ մալուխները ճիշտ են ուղղորդված իրենց ամբողջ երկարությամբ, որպեսզի չխճճվեն

3. Մտցրեք հոսանքի խրոցակը վարդակի մեջ



4. Սպասեք մինչև հոսանքի լուսադիոդը կայուն վառվի



5. Մտցրեք ավտոմեքենայի միակցիչը մեքենայի լիցքավորման մուտքի մեջ




6. Լիցքավորման գործընթացը ավտոմատ կերպով կսկսվի



7. Լիցքավորման գործընթացը ընդհատելու համար ապակողպեք մեքենայի լիցքավորման մուտքը և հեռացրեք մեքենայի միակցիչը



8. Հեռացրեք հոսանքի խրոցակը վարդակից



9. IC-CPD լիցքավորման սարքավորումը պահեք ապահով տեղում

12. Խափանումների շտկում

1. Ցուցադրիչ. ԽԱՓԱՆՈՒՄ
ԼՈՒՍԱԴԻՈՂԸ թարթում է երեք անգամ, որին հաջորդում է կարճ ընդմիջում



2. Ստուգեք վարդակը կամ հեռու պահեք IC-CPD լիցքավորման սարքավորումը արևի անմիջական ճառագայթներից կամ բարձր ջերմաստիճանից


13. Անսարքությունների կարգավորում

Կատարեք հետևյալ քայլերը.

1. Հեռացրեք ավտոմեքենայի միակցիչը մեքենայի լիցքավորման մուտքից




2. Հեռացրեք հոսանքի խրոցակը վարդակից




3. Սպասեք մոտ 5 վայրկյան



4. Չգուշուղյալ մտցրեք հոսանքի խրոցակը վարդակի մեջ



5. Սպասեք մինչև հոսանքի լուսադիողը կայուն վառվի



6. Մտցրեք ավտոմեքենայի միակցիչը մեքենայի լիցքավորման մուտքի մեջ



7. Լիցքավորման գործընթացը ավտոմատ կերպով կվերագործարկվի



ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ



Եթե ԽԱՓԱՆՈՒՄ
ԼՈՒՍԱԴԻՈՂԸ անընդմեջ
թարթում է կարմիր գույնի
լույսով լիցքավորման գործընթացի
ընթացքում կամ դրանից հետո, մի
օգտագործեք սարքը. դիմեք ձեր
հաճախորդների սպասարկման
կենտրոն (→ Էջ 21):



14. ICCB-ի հետևամասի պիտակ

ՀՈՍԱՆՔ	ԼԻՑԶԱՎՈՐՈՒՄ	ԶԵՐՄԱՍԻՃԱՆ	ԽԱՓԱՆՈՒՄ	Պատկերագիր	Նկարագրություն
					Էլեկտրաէներգիայի սնուցում չի հայտնաբերվել
					IC-CPD-ը պատրաստ է օգտագործման համար
					Լիցքավորում
					IC-CPD-ն այս պահին ինքնաստուգում է կատարում
					Լիցքավորման գործընթացը դառնալի է բարձր ջերմաստիճանի պատճառով: Լիցքավորման գործընթացը կարող է ավելի երկար տևել
					Լիցքավորումը ընդհատվել է ICCB-ի բարձր ջերմաստիճանի պատճառով: Ստուգեք էլեկտրացանցի վարդակը կամ հեռու պահեք IC-CPD լիցքավորման սարքավորումը արևի անմիջական ճառագայթներից
					Լիցքավորման գործընթացի ընդհատում հոսանքի խրոցակում առաջացած բարձր ջերմաստիճանի պատճառով
					Խափանում (→ Էջ 16)
					Էլեկտրացանցն անսարք է կամ այն չի կարող օգտագործվել այս սարքը լիցքավորելու համար: Ցանցային վարդակը պետք է ստուգվի որակավորված էլեկտրիկի կողմից

● = ՄԻԱՑՐԱԾ ○ = ԱՆՁԱՏՎԱԾ ☒ = Թարթում

15. Տեխնիկական սպասարկում և ինամք

ԿՏԱՆԳ

Էլեկտրահարում, կարճ միացում, հրդեհ, պայթյուն

Չգուշացում: Էլեկտրահարման և սարքին վնաս պատճառելու ռիսկերը նվազեցնելու համար առավելագույն զգուշությամբ մաքրեք խրոցակները և կորպուսը:



IC-CPD լիցքավորման սարքավորումը մաքրեք չոր լաթի կտորով: Մի օգտագործեք մաքրող նյութեր կամ դյուրավառ լուծիչներ, ինչպիսիք են՝ ակոհոլը կամ բենզինը:



Չի թույլատրվում քիմիական նյութերով մաքրումը կամ դրանց հետ ցանկացած այլ հպում, քանի որ դա կարող է վնասել սարքը:

16. Արտադրանքի փոփոխում

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ:



Արտադրանքի մեջ կատարված ցանկացած փոփոխություն կամ ձևափոխում, որը չի իրականացվում լիազորված սպասարկման կենտրոնի կողմից, չի թույլատրվում և կարող է հանգեցնել ԿՅՖՅ ստանդարտների անհամապատասխանության:

17. Օգտահանում



Շահագործումից դուրս հանված սարքերի օգտահանումը պետք է համապատասխանի երկրի և տարածաշրջանի համար նախատեսված կիրառելի օրենքներին

և ուղեցույցներին: Սարքավորումները և մարտկոցները երբեք չպետք է օգտահանվեն կենցաղային թափոնների հետ մեկտեղ:

- Շահագործումից դուրս հանված սարքավորումները պետք է հանձնվեն էլեկտրոնային թափոնների ընդունման կետ կամ օգտահանվեն ձեր դիլերի միջոցով
- Փաթեթավորման նյութը օգտահանելը սովորաբար թողնելի է պլաստմասյա նյութերի համար նախատեսված համապատասխան թափոնների ընդունման կետում

18. Երաշխիքի մասին տեղեկություններ

APTIV-ն երաշխավորում է, որ այս արտադրանքը գերծ կլինի նյութի և աշխատուժի հետ կապված թերություններից, ինչպես նաև նախագծման սխալներից՝ սկզբնական գնման օրվանից մեկ (1) տարի ժամկետով: Այն դեպքում, եթե հանկարծ այս երաշխիքային ժամանակահատվածում արտադրանքը թերություն ունենա նյութի, արտադրության կամ կառուցվածքի մեջ,

APTIV-ը, իր հայեցողությամբ, կվերանորոգի կամ կփոխարինի թերություն ունեցող արտադրանքը: Վերանորոգման մասերը և/կամ փոխարինվող ապրանքները կարող են փոխարինվել APTIV-ի հայեցողությամբ կամ Նոր, կամ վերականգնված ապրանքներով: Այս սահմանափակ երաշխիքը չի ներառում սխալ տեղադրման, ծայրամասերի սխալ միացման, արտաքին էլեկտրական միջամտության, վթարի, աղետի, սխալ օգտագործման կամ արտադրանքի մեջ կատարված ցանկացած փոփոխության պատճառով առաջացած վնասվածքի վերանորոգումը, որը APTIV-ի կողմից գրավոր հաստատված չէ: Այն վերանորոգման աշխատանքները, որոնք չեն մտնում սահմանափակ երաշխիքի մեջ, իրականացվելու են Նորոգման պահին կիրառվող սակագներով, դրույթներով և պայմաններով:

Այս արտադրանքի հետ կապված ցանկացած այլ ուղղակի կամ անուղղակի երաշխիք, ներառյալ որոշակի նպատակին համապատասխանելու երաշխիքը, սույնով բացառվում է: Որոշ երկրներում չի թույլատրվում անուղղակի երաշխիքների բացառումը, այնպես որ վերոնշյալ իրաժառույճ կարող է չկիրառվել ձեր իրավիճակում:

Եթե արտադրանքը չի համապատասխանում վերը նշված երաշխիքին, դուք միայն հնարավորություն կունենաք փոխարինելու կամ վերանորոգելու թերություն ունեցող արտադրանքը, ինչպես ամբողջությամբ նկարագրված է վերևում: APTIV-ը կամ վաճառքի կամ սպասարկման ներկայացուցիչը կամ վերադաս ընկերությունը ոչ մի դեպքում պատասխանատվություն չի կրում հաճախորդի կամ որևէ երրորդ կողմի հանդեպ արտադրանքի

գնման գինը գերազանցող ցանկացած վնասի համար: Այս սահմանափակումները վերաբերում են ցանկացած տեսակի վնասներին, ներառյալ ցանկացած ուղղակի կամ անուղղակի վնաս, կորցրած շահույթը, կորցրած ինսյուրությունները կամ հատուկ, պատահական կերպով հասցված վնասները, պատժիչ կամ հետևանք հանդիսացող վնասները, անկախ նրանից, թե դա պայմանավորված է պայմանագրի խախտման, խոշտանգումների կամ որևէ այլ միջոցների հետ, թե այդ վնասները հիմնված են արտադրանքի օգտագործման կամ ոչ պատշաճ օգտագործման վրա, նույնիսկ եթե APTIV-ին կամ APTIV-ի լիազորված ներկայացուցչին կամ դիլերին երրորդ անձանց կողմից խորհուրդ է տրվել այդպիսի վնասների հնարավորության կամ այլ պահանջի մասին:

Որոշ երկրներում պատահական կամ հետևանք հանդիսացող վնասների բացառումը չի թույլատրվում որոշ արտադրանքների համար, ուստի վերոնշյալ սահմանափակումը կամ բացառումը կարող է չկիրառվել ձեր հանդեպ:

Այս երաշխիքը ձեզ որոշակի օրինական իրավունքներ է տալիս, ինչպես նաև դուք կարող եք ունենալ այլ իրավունքներ, որոնք կարող են տարբերվել երկրից երկիր:

Խնդրում ենք կապվել ձեր հաճախորդների սպասարկման կենտրոնի հետ: Ձեր պատասխանատու հաճախորդների սպասարկման կենտրոնի տվյալներն իմանալու համար անդրադարձե՛ք ձեր մեքենայի ձեռնարկին: 📞

19. Տեխնիկական բնութագրեր

Էլեկտրական բնութագրեր

Հզորությունը.	առավելագույնը 3,6 կՎտ (կախված մոդելից և տարբերակից)
Անվանական հոսանքը.	առավելագույնը 16 Ա (կախված մոդելի տարբերակից)
Անվանական լարումը.	1-ափուլ. 100 - 240 Վ ~ (կախված մոդելի տարբերակից)
Էլեկտրացանցի հաճախականությունը.	50 Հց - 60 Հց
Գերլարման անվանակարգը.	II
Անվանական կարճաժամկետ դիմակայման հոսանքը.	< 10 կԱ ասի
Մնացորդային լարման սարք.	Տեսակ A
Պաշտպանության դասը.	II
IP պաշտպանության դասը.	IP67 (ICCB)
Հոսանքի խրոցակի տարբերակները.	Էջ 12 Հասանելի էլեկտրական խրոցակներ արդյունաբերական վարդակների համար Հասանելի էլեկտրական խրոցակներ կենցաղային վարդակների համար
Ավտոմեքենայի լիցքավորման մուտքերի և միակցիչների տարբերակները.	Էջ 11 Ավտոմեքենայի հասանելի լիցքավորման մուտքեր և միակցիչներ

Չափերը և քաշը

IC-CPD լիցքավորիչի չափերը.	Մոտ 3,74 դյույմ x 8,66 դյույմ x 2,32 դյույմ (95 մմ x 220 մմ x 59 մմ) (լքբխ)
IC-CPD լիցքավորիչի քաշը.	Մոտ 5,18 ֆունտ (2,35 կգ)

Շրջակա միջավայրի պայմաններ

Գործարկման ջերմաստիճանը.	-22 °F-ից +122 °F (-30 °C-ից +50 °C)
Պահպանման ջերմաստիճանը.	-40 °F-ից +158 °F (-40 °C-ից +70 °C)
Խոնավությունը.	Մինչև 95%, չկոնդենսացվող
Բացարձակ բարձրությունը.	առավելագույնը 16,404 ֆտ (5,000 մ) ծովի մակարդակից վերև

Ուղեցույցներ և չափանիշներ

Եվրամիության դիրեկտիվներ.	<ul style="list-style-type: none"> • 2014/35/EU, 2014/30/EU • 2011/65/EU
---------------------------	--

Չափանիշներ.

Այս IC-CPD լիցքավորման սարքավորումը համապատասխանում է IEC և EN բոլոր կիրառելի չափանիշներին և կանոնակարգերին՝ տեղական օրենսդրության, ինչպես նաև եվրոպական և միջազգային օրենսդրության համատեքստում: Անհրաժեշտության դեպքում համապատասխանության համապատասխան հայտարարագիրը կարող է հասանելի լինել

20. Սպասարկումը

Օգնության համար դիմեք ձեր տեղի ներկայացուցչին:

Կոնտակտային տվյալները կարող եք գտնել ավտոմեքենայի սեփականատիրոջ ձեռնարկում: 📄



21. Ընտրովի միջանկյալ ներդիր (կախված մոդելից)

Հանեք միջանկյալ ներդիրը, երբ այն անհրաժեշտ չէ.

